

---

---

ՀԱԱԳՈՒՅՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆՈՐԱՀԱՅՑ  
ՀՈՒՇԱՐՁԱՆ ԱԳԱՐԱԿՈՒՄ  
(Նախնական հաղորդում)

ԳԱՐԵԳԻՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Ագարակի հուշարձանախմբի պեղումները վերսկսվեցին 2012 թվականին՝ Հայաստանի Հանրապետության հարավ-հյուսիս ավտոմայրուղու Աշտարակ-Թալին ճանապարհահատվածի շինարարության կապակցությամբ: Պեղված քառակուսիները գտնվում են Ամբերդ գետակի արևմտյան (աջ) ափին, Երևան-Գյումրի ավտոմայրուղու աջ կողմում՝ ժայռահարթակի վրա, որտեղ նախկինում պեղումներ չեն իրականացվել: Մայրուղուց դեպի հյուսիս ընկած այս հատվածն ընդգրկված է «Ագարակ» պատմամշակութային արգելոցի սահմաններում՝ I տեղամասի կազմում: Հնագիտական աշխատանքները կատարվել են նոյեմբեր ամսին<sup>1</sup>, մեր կողմից պեղվել է ընդամենը 200 մ<sup>2</sup> մակերեսով մի տարածք:

Պեղվայրը բաժանված է քառակուսիների, որոնք ուղղված են ըստ երկրի կողմերի: D<sub>10</sub> քառակուսու ամենաբարձրադիր հատվածը հարավարևմտյան անկյունն է, ամենացածրը՝ հյուսիսարևելյանը: Այսինքն, հիշյալ քառակուսու սահմաններում հիմնաժայռը թեքությամբ իջնում է հարավից դեպի հյուսիս և արևմուտքից՝ արևելք: D<sub>10</sub> քառակուսու հյուսիսային եզրագծին կից՝ արևմուտքից դեպի արևելք, հիմնաժայռի ամենաբարձր և ամենացածր մակարդակների տարբերությունն ավելի քան 1,5 մ է:


D<sub>10</sub> քառակուսու հարավային եզրագծի մոտ՝ ժայռահարթակի վրա, բացվեց 0,10–0,20 մ հաստությամբ վաղբրոնզեդարյան հատակի մի հատված՝ գլաքարերով շարված, հողաշաղախով ամրացված և ծեփված (նկ. 1, 3): Պեղված հատակի միջից հայտնաբերվում էին բացառապես կուր-արաքսյան մշակույթին պատկանող խեցանոթների բեկորներ, իսկ հատակից վեր գտնվում էին նաև ուշ բրոնզ-վաղերկաթեդարյան խեցատներ, թեև շարունակում էին գերակշռել վաղ բրոնզի դաշրջանի արտեֆակտները:

Քննարկվող D<sub>10</sub> քառակուսում բացվել է վիթխարի հզորությամբ պարսպի մի հատվածը: Այս տեղամասում պարիսպը ձգվում է արևելք-արևմուտք առանցքով, դեպի հարավ զգալի շեղումով: D<sub>10</sub>-ի արևելյան եզրագծի մոտ դրա հաստությունը 8 մ է, արևմտյան եզրագծին կից՝ 5,85 մ:

---

<sup>1</sup> Ագարակի հնագիտական արշավախմբի ղեկավարն է Պ. Ավետիսյանը: 2012 թ. պեղումներին մասնակցել են Լ. Պետրոսյանը, Գ. Մարգարյանը, Ռ. Վարդանյանը, Գ. Թումանյանը:

Պարիսպը կառուցողները դրա հիմքի քարերը դրել են ժայռի վրա, հավանաբար, նախապես քանդելով վաղբրոնզեդարյան հատակը և ցեխով հարթեցնելով ժայռահարթակը: Պարիսպն ունի երկերես շարվածք, այն կառուցված է 1,3–1,5 x 0,9–1,0 x 0,3–0,4 մ չափեր ունեցող տուֆե մեծ քարաբեկորներով և սալերով, որոնք, ըստ երևույթին, ամրացվել և սվաղվել են հողաշաղախով (ցեխով): Արդյունքում, կուր-արաքսյան խաթարված հատակի մանր գլաքարերը, ցեխասվաղի հետ, հայտնվել են պարսպապատի վիթխարի քարերի արանքում: Պաշտպանական այս հզոր պատի միջնալիցքի վերին շերտի պեղումներով հայտնաբերվել են կուր-արաքսյան թրծակավե արձանիկների բեկորներ: Այստեղից կարելի է եզրակացնել, որ



Նկ. 1



Նկ. 2

պարիսպը կառուցվել է վաղ բրոնզի դարաշրջանից ավելի ուշ: Պարսպի միջնալիցքը կազմված է մեծ և միջին չափերի գլաքարերից, տուֆի քարաբեկորներից և բազալտե որձաքարերից, որոնք, հավանաբար՝ շարք առ շարք, վերնից հարթեցվել են հողաշաղախով: Մեր տեղամասում պահպանվել են պաշտպանական այս պատի երկու-երեք շարք քարերը՝ 1,0–1,20 մ բարձրությամբ (նկ. 2, 3):

Պարսպից դուրս, դրա հյուսիսային կողմի շարվածքին կից՝ հիմնաժայռը ծածկող խճավազի բարակ նստվածքաշերտի վրա, հաստ մոխրաշերտ է հայտնաբերվել: Ի դեպ, նման երևույթ է դիտվում  $D_{10}$ -ից դեպի արևելք ընկած և գործընկերներիս կողմից պեղված մյուս քառակուսիներում ևս: Մասնավորապես, մեր տեղամասում ( $D_{10}$  քառակուսու հյուսիսարևելյան անկյունում) մոխրաշերտի հաստությունը 0,60 մ է: Մոխրաշերտում հայտնաբերված խեցատները, առանց բացառության, ուշ բրոնզ-վաղերկաթեդարյան են<sup>2</sup>: Գարելի է եզրակացնել, որ պարսպի

<sup>2</sup> Հետաքրքիր է, որ հիշյալ մոխրաշերտում հայտնաբերվել է նաև մանգաղի կայծքարե ներդիր: Առանց լրացուցիչ հետազոտություններ կատարելու այն դժվար է տարբերել կուր-արաքսյան համանման արտեֆակտներից: Հնարավոր է, որ մանգաղի ներդիրը, եթե այն, իրոք, կուր-արաքսյան մշակույթի արգասիք է, սկզբում՝ ցեխի հետ, հայտնվել է պարսպի քարերի արանքում, այնուհետև, որոշ ժամանակ անց, երբ կուտակվել է մոխրաշերտը, ընկել է վերջինիս մեջ: Մակայն չի կարելի բացառել նաև այդ գործիքի ուշբրոնզեդարյան ծագումը, քանի որ մանգաղի կայծքարե ներդիր է հայտնաբերվել Գառնիի հրվանդանի «Թաղչա» կոչվող ուշբրոնզեդարյան բնակատեղիում ևս (տե՛ս Է. Վ. Խ ա ն գ ա դ յ ա ն. Գառնի IV. Երևան, 1969, էջ 127):

կառուցման և գործառնության ժամանակաշրջանն ամփոփվում է հենց այս դարաշրջանների սահմաններում, որոնք, մեր կարծիքով, ներկայացնում են հնագույն հայկական մշակույթի երկու հաջորդական փուլերը<sup>3</sup>: Հիշյալ մոխրաշերտը հայտնաբերվել է միայն պարսպապատի դրսի հատվածում՝ դրա հյուսիսային և արևելյան կողմերում, այնինչ՝ հարավային կողմում այն բացակայում է: Հավանաբար, պարիսպը շրջապատել է հրվանդանաձև հիմնաժայռի գագաթը, այսինքն՝ ժայռահարթակի ամենաբարձր մասում ուշ բրոնզ-վաղերկաթեդարյան ամրոց կամ բերդ-շեն է եղել<sup>4</sup>: Դատելով պարսպապատի շուրջը կուտակված մոխրաշերտի հզորությունից՝ հնագույն հայկական մշակույթի արգասիք այս ամրոց-բնակավայրի շրջակայքը ժամանակին անտատապատ է եղել: Ի դեպ, այժմ էլ, Բյուրա-

<sup>3</sup> Հնագույն հայկական հնագիտական մշակույթի վերաբերյալ տե՛ս Գ. Թումանյան. Գուսանագողի դամբարանը հին հայկական մշակույթի սկզբնավորման համատեքստում.– Հին Հայաստանի պատմության և մշակույթի հարցեր, Երևան, 2001, էջ 25, նույնի՝ Ագարակի հնագիտական համալիրի I<sub>1</sub> և H<sub>1</sub> քառակուսիների պեղումների նախնական արդյունքները.– Հին Հայաստանի մշակույթը, XII, Երևան, 2002, էջ 17, նույնի՝ Ագարակի հնավայրի I տեղամասի 2002 թ. պեղումները.– Հին Հայաստանի մշակույթը, XIII, Երևան, 2005, էջ 65, նույնի՝ Աշտարակի Ուռուցք, Երևան, 2005, էջ 51, նույնի՝ Հնձանային մշակույթը Հայաստանում, Երևան, 2008, էջ 14–15:

<sup>4</sup> Այս ենթադրության համար որոշ հուշող տվյալներ կային արդեն տասը տարի առաջ, երբ պեղումներ էին կատարվում Երևան–Գյումրի ավտոմայրուղու ձախ կողմում: Մայրուղուց դեպի հարավ ընկած այդ հատվածում, H<sub>12</sub> քառակուսու հարավարևմտյան անկյունում բացվել էր մեծ քարերով շարված պատի կարճ հատվածի մի երեսը, որը ձգվում էր հարավ-արևելք–հյուսիս-արևմուտք առանցքով և մտնում քառակուսու հարավային ու արևմտյան կտրվածքների մեջ: Պարսպի հիմքերը դրված էին ժայռի վրա և անխաթար պահպանվել էին դրա երեք շարք քարերը: Այդ ժամանակ, մեր կողմից պեղվող տեղամասում, դեռևս չէին հայտնաբերվել ուշ բրոնզ-վաղերկաթեդարյան շինություններ, սակայն մենք չէինք բացառում, որ «կուր-արաքսյան մոխրաշերտից վեր գտնվող և մասամբ սրա մեջ թափանցած մեծ գլաքարերը այդ ժամանակահատվածին պատկանող կառույցների փլվածքի մնացորդներ լինեն» (տե՛ս Գ. Թումանյան. Ագարակի հնավայրի I տեղամասի 2002 թ. պեղումները, էջ 61): 2012 թ. պեղումների ընթացքում պարզ դարձավ, որ նոր հայտնաբերված պարիսպը և 2002 թ. բացված պատը համեմատելի են մի շարք բնութագրիչներով (ըստ շարվածքի քարերի տեսակի ու չափերի, պահպանված շարքերի քանակի ու բարձրության, միջնալիցքի, հիմքը դնելու և պատերը շարելու տեխնիկայի և այլն) ու կարող են համաժամանակյա լինել: Նախկինում՝ 2007 թվականին, նման պատի մի երեսը բացվեց նաև I<sub>12</sub> քառակուսու սահմաններում, վերջինիս անկյունագծից որոշակի շեղումով, H<sub>12</sub>-ի քննարկվող պատի հետ մոտավորապես մի գծի վրա: Հիշյալ պատը ներկայացված էր հատած հիմնաժայռի հետ միևնույն գծով շարված երեք վիթխարի քարերով, որոնք տափակ դրված էին կուր-արաքսյան մոխրաշերտի վրա և ի հայտ եկան միջնադարյան հացատան հատակի ու հարավարևելյան պատի տակ: Այս երեք հսկայական քարերը կազմում էին I<sub>12</sub> քառակուսու սահմաններում բացված շինարարական հորիզոններից մեկը (միջին հորիզոնը): Հաջորդ տարվա պեղումներով քարաշար հաստ պատի մի երեսը բացվեց J<sub>1</sub> քառակուսու հյուսիսարևմտյան հատվածում: Վերջին քառակուսու պեղումները՝ ժամանակի սղության պատճառով, մնացին անավարտ: Այսպիսով, Երևան–Գյումրի ավտոմայրուղուց հյուսիս ընկած պարսպի հատվածը, ըստ նախնական դիտարկումների, օթեքվում է՝ դեպի արևմտահարավ, իսկ մայրուղու հարավային կողմում գտնվող պարսպապատը, ըստ երևույթին, ուղղված է դեպի հյուսիս-արևմուտք: Գարեջուր է եզրակացնել, որ Ագարակի ուշ բրոնզ-վաղերկաթեդարյան ամրոցի պարսպապատը հատակագծում ունեցել է եռանկյան կամ երկրաչափական սեղանի ձև, որի ենթադրյալ հիմքը կամ, համապատասխանաբար, մեծ հիմքը, եղել է ժայռոտ հրվանդանի արևելյան՝ գետահայաց, բարձր կողմում:

կան գյուղից ցած՝ դեպի Ագարակ, բլրակների վրա պահպանվել են երբեմնի անտառների նոսր հետքերը:

Միսլ չի լինի նաև ենթադրել, որ Ագարակի ուշ բրոնզ-վաղերկաթեդարյան բերդ-շենի պարիսպն առավելագույն հաստություն է ունեցել իր արևմտյան հատվածում կամ էլ այդ կողմից այն պաշտպանված է եղել մեկից ավելի պարիսպներով, քանի որ այդ մասում ժայռահարթակը տեղանքի նկատմամբ իշխող դիրք չունի և բարձրադիր ու զառիթափ մյուս կողմերի համեմատ ավելի մատչելի է<sup>5</sup>: Ըստ երևույթին, նախկինում՝ տասնամյակներ առաջ, Երևան-Գյումրի ավտոմայրուղու շինարարության ժամանակ ոչնչացվել է ուշ բրոնզ-վաղերկաթեդարյան պարսպի ամենահզոր հատվածը: Հետաքրքիր է, որ C<sub>10</sub> և D<sub>10</sub> քառակուսիների եզրագծում հիմնաժայռն ունի բնական փոքրիկ գոգավորություն, որից վեր՝ հարավային կողմում, կառուցված է պարիսպը: Այսինքն՝ հյուսիսից պարսպին մոտեցողը հայտնվում է տվյալ տեղանքի ամենացածր դիրքում:



Նկ. 3



Նկ. 4

Այսպիսով, բոլոր քառակուսիների պեղումների արդյունքում, պարսպի բացված հատվածի ընդհանուր երկարությունը, առայժմ, ավելի քան 21 մետր է (նկ. 3): D<sub>10</sub> քառակուսում ամբողջովին պահպանվել է պարսպապատի 10 մետրանոց հատվածը (նկ. 4), որտեղ աչքի է զարնում պաշտպանական կառույցի հաստության անհամամասնությունը. ինչպես վերն ասվեց՝ 5,85–8 մ: Նման տատանումներ արձանագրված են ուշ բրոնզ-վաղ երկաթեդարյան այլ ամրոց-բնակավայրերի պարիսպների առնչությամբ: Օրինակ, Գառնիի «Թաղչա» կոչվող բերդ-շենի պարսպի հաստությունը տատանվում է 4,5–7,5 մետրի սահմաններում: Ի դեպ, հիշյալ ամրոցը նույնպես կառուցված է զառիթափ հրվանդանի վրա՝ միննույն շինարարական տեխնիկայով<sup>6</sup>: Հնարավոր է, որ նախալեռնային գոտում գտնվող համաժամանակյա այս երկու հնագիտական հուշարձանները համադրելի լինեն նաև այլ առումներով<sup>7</sup>:

<sup>5</sup> Հիշյալ իրողությունը հատկանշական է բոլոր տեսակի ամրոցներին՝ անկախ տարածաշրջանից և դարաշրջանից:

<sup>6</sup> Վերջինիս «պատերը կառուցված են մեծածավալ ժայռաբեկորներով, որոնք երկու կողմից երեսապատման դեր են կատարել, իսկ միջին մասը լցված է նույն քարի ավելի փոքր բեկորներով». տե՛ս է. Վ. Խ ա ն գ ա դ յ ա ն. նշվ. աշխ., էջ 125:

<sup>7</sup> Հայաստանի ուշ բրոնզ-վաղերկաթեդարյան մի շարք հնագիտորեն ուսումնասիրված հուշարձաններ՝ իրենց պարիսպների հաստությամբ, նույնպես զիջում են Ագարակի նորահայտ ամրոցին: Օրինակ, Հնաբերդի պարսպի հարավային հատվածի լայնությունը, ըստ հրատարակված

Պարսպի պահպանված մասի վրա 0,15–0,40 մ հաստությամբ տոփանված հողի և մանր քարերի շերտն է, որի վերևում գլաքարերով շարված հենապատն է: Այն ընկած է D<sub>10</sub> քառակուսու սահմաններում և, հիմնականում, ուղղված է հարավ-արևելք՝ հյուսիս-արևմուտք առանցքով<sup>8</sup>: D<sub>10</sub>-ի հյուսիսային եզրագծի արևմտյան



հատվածին կից բացվել է միջնադարյան հենապատ, որի վերին շարքը կառուցված է հարթ երես ունեցող բազալտե որձաքարերով (նկ. 5), իսկ ստորին շարքի քարերի մեջ կան նաև տուֆե մեծ սալեր, որոնք, ըստ երևույթին, ուշ բրոնզ-վաղերկաթեդարյան պարսպի քարերից են: Հավանաբար, միջնադարում, այս II սանդղահարթակը կառուցել են, որպեսզի պարսպի կանգուն մնացած հիմքի հետ մեկ հարթություն ստանան: Միջ-

նադարյան վերին հենապատից 1,5 մ դեպի հյուսիս շարված է մեկ այլ հենապատ, որի միջոցով ստացել են երկրորդ հարթակից 0,25 մ ցած գտնվող I աստիճանահարթակը: Առաջին (հյուսիսային) հենապատն ընկած է C<sub>10</sub> քառակուսու սահմաններում (նկ. 6, 7): Հարկ է նշել, որ Ագարակի հնավայրում նախկինում ևս հայտնաբերվել են ժայռի թեք մասերում ստեղծված միջնադարյան սանդղաձև հարթակներ<sup>9</sup>:

Նկ. 5

հատակագծի, 5,70 մ է (տե՛ս P. Avetisyan, R. Badalyan, A. Smith. Preliminary Report on the 1998 Archaeological Investigations of Project ArAGATS in the Tsaghkahovit Plain, Armenia.– SMEA, XLII/1, 2000, p. 42, fig. 10): Մառնադրյուրի Փոքր բերդի միջնաբերդի և ստորին բերդի պարիսպների հաստությունը 3–3,5 մ է (տե՛ս Գ. Ե. Արեշյան. Կ. Կ. Ղաֆադարյան. Հայկական լեռնաշխարհի ճարտարապետությունը նախնադարյան համայնական հասարակարգի և պետական առաջին կազմավորումների ժամանակաշրջանում.– Հայկական ճարտարապետության պատմություն (վեց հատորով), հ. 1, Երևան, 1996, էջ 76): Գավառի Բերդի գլուխ ամրոցի պարիսպների լայնությունը 4 մ է, իսկ Լճաշենի կիկլոպյան ամրոցի պարսպատերի լայնությունը՝ 3,5–5 մ (տե՛ս Ն. Ա. Մարտիրոսյան. Ուշ բրոնզեդարյան բնակավայրեր և դամբարանադաշտեր, Երևան, 1969, էջ 14): Գեղհովտի Մթնաձոր կամ Բերդի գլուխ ամրոցի պարսպի հաստությունը 3–4 մ է (տե՛ս Գ. Հ. Միքայելյան. Սևանի ավազանի կիկլոպյան ամրոցները. Երևան, 1968, էջ 35): The North–Eastern Frontier Urartians and Non–Urartians in the Sevan Lake Basin. Documenta Asiana VII. Edited by R. Biscione, S. Hmayakyan and N. Parmegiani. Roma, 2002, p. 181) և այլն: Ավելացնենք, որ հիշյալ ամրոցների պարիսպներն ունեցել են ուղղանկյուն հաստակագծով որմնահեցեր կամ աշտարակներ, որոնցով, հնարավոր է, օժտված է եղել նաև Ագարակի բերդ-շենի պարիսպը:

<sup>8</sup> Այստեղ խոսք է գնում միայն վերգետնյա կառույցի մասին: Համաձայն դաշտային հնագիտական աշխատանքների ժամանակացույցի՝ ծրագրավորված է D<sub>10</sub>-ին արևմուտքից սահմանակից D<sub>11</sub> քառակուսու պեղումներն իրականացնել 2013 թ.:

<sup>9</sup> Չարագած միջնադարյան սանդղահարթակներ բացվել են, մասնավորապես, I<sub>1</sub> և H<sub>11</sub> քառակուսիների սահմաններում: Վերջիններս կառուցվել են իրարից ավելի քան 6 մետր հեռավորության վրա տեղադրված և շինարարական տեխնիկայի առումով ակնհայտ նմանություն ունեցող երկու հենապատերի օգնությամբ. տե՛ս Գ. Թումանյան. Ագարակի հնագիտական համալիրի I<sub>1</sub> և H<sub>11</sub> քառակուսիների պեղումների նախնական արդյունքները, էջ 15–16, ն ու յ ն ի՝ Ագարակի հնավայրի I տեղամասի 2002 թ. պեղումները, էջ 62–63:

*D10 քառակուսու հարավային եզրագծի 0,75 մ հզորությամբ շերտագրական կտրվածքը՝ հարավարևմտյան անկյան զցից 3 մ դեպի արևելք, ներկայացնում է հետևյալ պատկերը: Ճիմահողն ունի 0,05 մ հաստություն: Դրա տակ 0,15 մ բարձրությամբ դեղին խճավազի շերտն է, որին նախորդում է 0,45 մ հզորությամբ քարահողային խառը շերտը: Սրա տակ՝ ժայռի վրա նստած, 0,10 մ հզորությամբ ստորին շերտն է, որը բաղկացած է մանր գլաքարերից, հողաշաղախից և ցեխավաղից: Այս ստորին շերտը, այլ խոսքով, վաղբրոնզեդարյան հատակն է, որը կապվում է կուր-արաքայան մշակույթի կրողների գործունեության հետ: Ինչպես արդեն ասվել է, հատակի պեղումներով հայտնաբերվել են բացառապես վաղբրոնզեդարյան արտեֆակտներ, մասնավորապես՝ օջախի միննույն հենակի երկու (մարդակե՞րպ) վերջավորությունները: Կուր-արաքայան հատակից վեր գտնվող*



Նկ. 6



Նկ. 7

*խառը շերտում առկա են քարեր, որոնցով, հնարավոր է, շարված են եղել կուր-արաքայան կլոր կացարանների պատերը: Այս շերտում, վաղբրոնզեդարյան գտածոների (մակույկաձև աղորիքների բեկորներ, քարե սանդկոթեր, այդ թվում՝ «տանձաձև», տրորիչներ, կոկիչներ, հնձի դանակ՝ կայծքարե հարդարված շեղք, կնոջ թրձակավե կուռք՝ թերի, ցլի թրձակավե արձանիկի եղջյուր) հետ, ի հայտ են գալիս և ուշ բրոնզ-վաղերկաթեդարյան անգարդ ու զարդաբանված (խորադիր ալիքաձև զծերով, եղունգազարդ հատակներով) խեցաբեկորներ, բրոնզե թերի ապարանջաններ, քարե գործիքներ (չեչաքարե հատած կոնաձև կոկիչներ): Այս միջավայրում հայտնաբերվել են նաև վանակատե նետասլաք, ուղիղ անկյուն կազմող բրոնզե լարի հատված ու բրոնզե անորոշ թիթեղ: Խառը շերտի վերին հորիզոնում և դեղին քարավազի շերտում, հիշյալ դարաշրջանների որոշ առարկաների հետ, հայտնաբերվել են զարգացած միջնադարյան արտեֆակտներ՝ աղեղնաձև կանթով խեցանոթի բեկոր, ջնարակած խեցատներ, գնդակոնաձև (ձվաձև) խեցանոթի բեկորներ: Հնարավոր է, որ հիշյալ շերտում լինեն հելլենիստական մշակույթին բնորոշ խեցաբեկորներ:*

*C10 քառակուսին ընկած է D10 քառակուսու հյուսիսային կողմում, այսինքն՝ դրա հարավային սահմանը համընկնում է D10-ի հյուսիսային եզրագծին, իսկ C10-ի հյուսիսարևելյան հատվածով անցնում է ժայռափոր ճանապարհը (նկ. 8): C10-ի հարավային եզրագծին կից գտնվում է միջնադարյան հյուսիսային (առաջին) սանդղահարթակը, իսկ հիշյալ քառակուսու արևմտյան և հյուսիսային եզրագծերն անցնում են քարափի վրայով:*

*Ընդհանուր տեսքի հիմնական մասերից հարևանությամբ պեղումներով ի հայտ եկած ուշ բրոնզ-վաղերկաթեդարյան մոխրաշերտը շարունակվում է նաև C<sub>10</sub>-ի հարավային մասում: Մոխրաշերտի վրա՝ առաջին սանդղափայտակա դեպի հյուսիս, վերջինիս հենապատից 0,25 մ ցած, մանր քարեր են շարված, այդ թվում՝ տափակ սալեր (նկ. 9): Այսպիսով, այս տեղանքը միջնադարում սանդղաձև տեսք է ստացել, այսինքն՝ վերածվել է դարավանդի: C<sub>10</sub> քառակուսու հարավարևելյան հատվածում՝ ուշ բրոնզ-վաղերկաթեդարյան մոխրաշերտի մեջ, բացվեց արևմուտք-արևելք առանցքով ուղղված և C<sub>9</sub>-ում<sup>10</sup> շարունակվող, տարատեսակ փոքր քարերով (առավելագույնը՝ 0,5 x 0,25 x 0,20 մ չափերով) շարված մի պատ, որից պահպանվել են երկու շարք քարերը՝ 0,40 մ բարձրությամբ:*



Նկ. 8



Նկ. 9



Նկ. 10

*Այս պատը, հիմնականում, շարված է դեղնակարմրավուն տուֆ քարերով, բայց շարվածքի մեջ հանդիպում են նաև փոքրիկ սալաքարեր (նկ. 10): Պատը միայն մի երես ունի՝ հարավային կողմում, դրա քարերն ամրացված են հողաշաղախով: Պատի հիմքը՝ արևմտյան հատվածում, դրված է 6 սմ հաստությամբ մոխրաշերտի վրա: Սա գտնվում է ուշ բրոնզ-վաղերկաթեդարյան հզոր պարսպից 4,30 մ հեռավորության վրա՝ դեպի հյուսիս և ճշգրիտ զուգահեռ է վերջինիս (նկ. 11): Այստեղից հետևում է, որ փոքր պատը շարողները տեսել են պաշտպանական պարիսպը և հաշվի են առել դրա ուղղությունը: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ պարսպի դրսի կողմին կից ժամանակավոր ծածկ («չարդախատիպ» շինություն) է կառուցվել այն ժամանակ, երբ պարիսպը, գոնե մասամբ, արդեն շարված էր կամ դեռևս կանգուն էր: C<sub>10</sub> քառակուսու հարավարևելյան անկյունում հիմնաժայռի*

<sup>10</sup> Քառակուսու պեղումների ղեկավար՝ Ռ. Վարդանյան:

մեջ, սաղր ու կլոր գոգավորություն էր փորված՝ 7 սմ խորությամբ և 22 սմ տրամագծով: Սա կարող էր ծածկը պահող փայտե հենասյան հիմքի բնկալ ծառայել: Մրանից  $\approx 0,5$  մ դեպի հարավ-արևելք բացվեց նույնպես ժայռափոր մի սանդ՝ 18 սմ խորությամբ, 21 և 25 սմ տրամագծերով (նկ. 12):



Նկ. 11

գտնվեց (զինու) փոքր թաս: Մոխրաշերտում հայտնաբերվել են ուշ բրոնզ-վաղերկաթեդարյան խեցանոթների (մասնավորապես՝ սև փայլատ մակերևույթով, եղունգազարդ հատակներով կճուճներ, կարասներ, քամիչ և այլն) բեկորներ, քարե



Նկ. 12

Շերտագրական առումով հետաքրքրություն է ներկայացնում C<sup>10</sup> քարակուսու արևելյան եզրագծի 0,85 մ հզորությամբ ուղղահայաց կտրվածքը՝ հարավարևելյան անկյան զցից 1,90 մ դեպի հյուսիս: 0,03 մ հաստությամբ ճիմահողից ցած 0,06 մ բարձրությամբ դեղին խճավազի շերտն է, որի տակ հողաշերտ է՝ 0,10 մ բարձրությամբ: Մրան նախորդում է 0,64 մ հզորությամբ մոխրաշերտը, որի մեջ կան նաև մանր քարեր: Այս շերտից ցած հիմնաժայռի վրայի նստվածքաշերտն է՝ ընդամենը 0,02 մ հաստությամբ մանրախիճ: Վերջինիս վրայից՝ ժայռահարթակի բնական գոգավորություններից մեկում, հայտնաբերվեց կուր-արաքսյան մշակույթին պատկանող դանակի բրոնզե շերտ: C<sup>10</sup>-ի հարավարևելյան անկյան մոխրաշերտում՝ ժայռահարթակից քիչ վեր, հավանաբար, «չարդախի» հատակին

գործիքներ (սանդկոթեր, սրոցաքարեր, ծանրոցներ), վանակատի ծլեփներ, բեկորներ: Մոխրի վրա առաջացած խառը հողաշերտում, ուշ բրոնզ-երկաթեդարյան (կարասի բեկոր, սանդկոթ), գուցե նաև հելլենիստական գտածոների հետ, ի հայտ են գալիս վաղբրոնզեդարյան խեցաբեկորներ ևս: Դեղին քարավազի շերտում, հիշյալ դարաշրջանների որոշ արտեֆակտների հետ, հայտնաբերվել են նաև զարգացած միջնադարյան խեցանոթների բեկորներ: Միջնադարյան խեցատներ (մասնավորապես՝ ձգված խոշոր անոթի բեկորներ)

են առկա ավելի մեծ խորությունում նույնպես՝ այն հատվածում, որտեղ, հիշյալ



դարաշրջանում, մաքրվել է մոխրաշերտը և կառուցվել առաջին սանդղահարթակի հենապատը:

Հատկապես մեծաքանակ են  $D_{10}$  և  $C_{10}$  քառակուսիների պեղումներով հայտնաբերված վանակատի ծլեփները և բեկորները: Բավական է ասել, որ պեղումների օրերից մեկի ընթացքում միայն  $C_{10}$ -ից գտնվել է 256 միավոր վանակատ: Քանի որ վանակատե առարկաների մեծ մասը հայտնաբերվել է հիշյալ քառակուսիների սահմաններում ի հայտ եկած ուշ բրոնզ-վաղերկաթեդարյան մոխրաշերտից, ուստի կարելի է եզրակացնել, որ հնագույն հայկական մշակույթը կրողները շարունակում էին արդյունավետ մշակման ենթարկել վանակատը և դրանից գործիքներ ու զենքեր պատրաստել: Անկասկած, այդ ժամանակ որպես հումք գործածական էր նաև կայծքարը, որի կիրառությունն է վկայում, գուցե, մանգաղի կայծքարե ներդիրը:

Մոխրաշերտում բազմաթիվ են նաև տարբեր կենդանիների ատամները և ոսկորները, որոնց զգալի մասը (18 միավոր) բնորոշվել է<sup>11</sup>: Դրանք, հիմնականում, պատկանում են մեկ խոշոր եղջերավոր կենդանու, թեև չի բացառվում այս հավաքածուում մեկ այլ խոշոր եղջերավորի ատամի առկայությունը: Գտնվել են նաև մանր եղջերավոր կենդանու խողովակավոր ոսկոր և ձիու ստորին ծնոտի մեկ ատամ: Կենդանիների թվարկված տեսակների ոսկորների առկայությունը սովորական է Հայաստանի հնագիտական հուշարձանների ուշ բրոնզ-վաղերկաթեդարյան շերտերի համար:

Այսպիսով, Ագարակի հուշարձանախմբի 2012 թ. պեղումներով ոչ միայն հայտնաբերվեց ուշ բրոնզ-վաղերկաթեդարյան մի նոր ամրոց, այլև սկիզբ դրվեց դրա ուսումնասիրությանը: Արագած լեռան հարավային և հարավարևելյան լանջերի շարունակությունը կազմող այս տարածաշրջանում, «Ագարակ» պատմամշակութային արգելոցի մերձ հարևանությամբ, վաղուց հայտնի էին մի խումբ հնագույն հայկական բնակավայր-ամրոցներ. հյուսիս-արևմուտքում՝ Տեղերը, արևմուտքում՝ Մոտկանը, հարավ-արևմուտքում՝ Շամիրամը, հարավում՝ Աղթամիրը և Պատառիճը, հարավ-արևելքում՝ Օշականը, արևելքում՝ Աշտարակը, հյուսիս-արևելքում՝ Մուղնին, հյուսիսում՝ Նազրվանը և Բազմակնը: Նորահայտ հուշարձանի ուսումնասիրության հենց նախնական փուլում, Ագարակի հնագիտական համալիրը պեղող հնագետների առջև դրվեցին մի շարք նոր հարցեր. ա) որո՞նք են ամրոցի կառուցման և գոյատևման կոնկրետ ժամանակաշրջանները, բ) ի՞նչ դեր է վերապահվել այս ամրոցին Արագածոտնի նախալեռնային գոտու համաժամանակյա բերդ-շեների համակարգում, գ) քանի՞ շարք պարիսպով է շրջափակված եղել ամրոցը, դ) նոր բացված պարիսպն արդյոք օժտված է եղել որմնահեցերով, ե) պարսպի վերին հատվածն արդյո՞ք քարերով է շարված եղել, թե՞ նաև հում աղյուս է կիրառվել, զ) ինչի՞ հետևանքով է առաջացել այդքան հաստ մոխրաշերտը: Հուսով ենք, որ սրանց և բազմաթիվ այլ հարցերի պատասխանները կստացվեն հաջորդ տարիների պեղումների արդյունքում:

<sup>11</sup> Կենդանիների ոսկորները բնորոշել և տվյալները մեզ է տրամադրել ՀՀ ԳԱԱ կենդանաբանության ինստիտուտի առաջատար գիտաշխատող Ն. Հ. Մանասերյանը:

*Հարկ էմ համարում անդրադառնալ նաև կարևորագույն մի հարցի: Բանն այն է, որ 2012 թ. կատարված և ընթացիկ տարրում իրականացվելիք պեղումներն ունեն փրկչական բնույթ, այսինքն՝ ենթադրվում է, որ 2013 թ. պեղումներից հետո «Ազարակ» պատմամշակութային արգելոցի մաս կազմող այդ տարածքը՝ կառուցապատման նպատակով, հանձնվելու է ճանապարհաշինարարներին: Հավանական է, որ ավտոմայրուղին կառուցելու աշխատանքների ընթացքում Ազարակի հինավուրց ամրոցի պարսպի հյուսիսային հատվածը կավերվի: Թեև, ոչ վաղ անցյալում՝ Երևան-Գյումրի ավտոմայրուղու շինարարության ժամանակ, ոչնչացվել է ուշ բրոնզ-վաղերկաթեդարյան պարսպի արևմտյան՝ հավանաբար ամենամարացված, հատվածը, այնուամենայնիվ, հնագույն հայկական մշակույթը ներկայացնող այս նորահայտ հնագիտական հուշարձանն այժմ էլ եզակի է իր տեսակի մեջ՝ բախտի կամոք պահպանված իր հյուսիսային պարիսպի հզորությամբ, ուստի չի կարելի թույլ տալ, որ այդ պարիսպը նույնպես քանդվի: Դրա հետևանքով, երեք հազարամյակից ավելի կանգուն մնացած ամրոց-բնակավայրի պարսպի հիմքերը վերջնականապես կանհետանան երկրի երեսից: Ազարակի ուշ բրոնզ-վաղերկաթեդարյան բերդ-շենի պաշտպանական կառույցների մնացորդների պահպանության խնդիրը, որքան էլ դժվարին և ծախսատար լինի, խելամիտ գործնական լուծում է պահանջում:*

НОВОВЫЯВЛЕННЫЙ ПАМЯТНИК ДРЕВНЕЙШЕЙ  
АРМЯНСКОЙ КУЛЬТУРЫ В АГАРАКЕ  
(Предварительное сообщение)

ГАРЕГИН ТУМАНЯН

Р е з ю м е

На территории археологического памятника Агарак в 2012 г. производились раскопки на скалистом плато западного берега р. Амберд, по правой стороне шоссеиной дороги Ереван-Гюмри. В результате археологических работ выявлена часть исполинской оборонительной стены. На данном участке стена направлена по оси восток-запад с отклонением к югу. Камни ее фундамента поставлены на туфовую площадку, после выравнивания последней земляным раствором. Оборонительная стена построена большими туфовыми глыбами с помощью вяжущего раствора, двухлицевой кладкой и забутована валунами, туфовыми и андезито-базальтовыми глыбами больших и средних размеров. Сохранились камни 2-3 рядов этого мощного оборонительного сооружения. Общая длина обнаруженной (до настоящего времени) раскопками оборонительной стены составляет более 21 м, толщина – 5,85–8,0 м, высота – 1,0–1,20 м. На основании археологических находок, обнаруженных за стеной – в зольном слое, примыкающем к кладке с севера, можно сделать вывод, что время строительства и функционирования оборонительной стены укладывается в пределах эпох поздней бронзы – раннего железа. Раскопками также обнаружены артефакты эпох ранней бронзы (черепки сосудов, глиняные надочажные подставки, терракотовые статуэтки) и развитого средневековья (поливные черепки, сфероконический сосуд и т. д.). Как раскопки 2012 г., так и раскопки, ожидаемые в 2013 г., имеют спасательный характер. Предполагается, что по окончании раскопок текущего года указанная территория, являющаяся частью историко-культурного заповедника «Агарак», будет сдана дорожникам под строительство автомагистрали. Вероятно, что в ходе строительных работ северная часть оборонительной

стены агаракской крепости эпохи поздней бронзы будет разрушена. Так как этот нововыявленный памятник древнейшей армянской культуры уникален по мощности своих оборонительных стен, нельзя допустить его разрушения. Задача охраны оборонительных сооружений древнейшей крепости-поселения Агарака требует рационального решения, независимо от сложности и расходов.

NEWLY REVEALED MONUMENT OF ANCIENT  
ARMENIAN CULTURE IN AGARAK

(Preliminary report)

GAREGIN TUMANYAN

S u m m a r y

In 2012, excavations were carried out in Agarak archeological site on the west bank of the river Amberd, to the right from Yerevan-Gyumri highway, on the rocky plateau. As a result of excavations, a segment of a huge defensive wall was disclosed. In this part, the wall has east-west direction with a deviation to the south. The stones of its basement are placed on the rocky ground after smoothening it with earthy mortar. The defensive wall is built from big tuff blocks with a use of earthy cementing material and has a double-faceted laying. The wall is backfilled with boulders and middle and big size tuff and rag stones. Two-three rows of stones of this immense defensive structure are preserved. The overall length of the wall disclosed so far is over 21 m, the thickness is 5.85–8.0 m, the height is 1.0–1.20 m. Based on the findings (shards of clay vessels, obsidian items, stone tools) from the ash layer next to the wall – on its outer northern side, a conclusion can be made that the wall was constructed and utilized within the boundaries of Late Bronze – Early Iron Ages. Excavations also disclosed artefacts from Early Bronze Age (vessel shards, hearth stands, terracotta figurines) and Developed Medieval Age (glazed shards, a spheroidal vessel, etc). Both the excavations in 2012 and the planned excavations in 2013 have a rescue mission. Presumably, after the completion of 2013 excavations, this territory, which is a part of “Agarak” historical-cultural conservation, will be handed to road builders for construction of a highway. Because of these construction works, most probably, the northern part of the defensive wall of Agarak’s Late Bronze Age fortress will be destroyed. As this newly revealed archeological monument of ancient Armenian culture is unique because of the thickness of its defensive walls, its demolition should not be allowed. Regardless of challenges related to feasibility and cost, a wise practical solution should be found to address the issue of preserving the defensive structures of Agarak’s ancient fortress-settlement.